նոցա հոգու մէջ։ Իսկ հարցը նորա մէջն է թէ արդեօք այդ գրքերը արժանի ծառայութիւն կը մատուցանեն գիտնականաց։ Մենք դորան կը պատասխանենք, որ սոքա կազմուած են օրինակելի կերպիւ, լեզուն սահուն, պարզ և հասկանալի է. իսկ պատմութիւնները տուած են այնպիսի ձեւով, որ կարող են աշակերտի մէջ անմիջական հետաքրքրութիւն (unmittelbares Interesse) յառաջացնել։ Մեզ աւելի ոչինչ չէ հարկաւոր։

Վերջացնելով իմ երկու խօսքս բարեկրօն քահանայ Սահակեանցի դասատուութիւնների մասին, աւելորդ չեմ համարում հետեւեալն աւելացնել. տալ Աստուած, որ Ս. Գ. Ս. այս մեզ համար կարեւոր կրօնուսուցման վերանորոգիչ գործիքիչ նոյն եռանդը պահպանէ ինչպէս հիմա և իւր սկսած կարեւոր գործը անկատար չը թողնէ։ Նորա երկասիրութիւններն ունին արդէն մեր ազգային գրականութեան պատմութեան մէջ յարգելի տեղ և միշտ վերանորոգիչ ազդեցութիւն կ'ունենան մեր կրօնուսուցիչների դասատուութեանց վերայ։

Բ.

P. S. Ցաւելով կարդում եմ «Արարատ» ամսագրի մէջ, որ Էջմիածնի ուսումնական-վարչական յանձնաժողովը իւր իրաւունքը չի համարել նոր դասագրքեր թուլատրել մինչև կաթողիկոսի գալը։ Առանց ինձ իրաւունք համարելու մտնել իրաւաբանական խնդիրների մէջ՝ լոկ մանկավարժական տեսակէտից պէտք է խորին ցաւս յայտնեմ, որ Տէր Տեղակալի իրաւունքի ապպիսի ըմբռնումով մեր ուսումնարանները առ նուազն մէկ տարի պէտք է զրկուեն այսպիսի պատուական ձեռնարկների օժանդակութիւնից, ինչպիսին են վերը գրախօսած դասատետրերը։

Բ.

ՄՈՇՈՒԵԱՆՑ, ՊԵՏՐՈՍ։—«Բանաստեղծութիւններ»։ Աղէքսանդրապոլ. տպարան Աբրահամ Մալխասեանցի, 1892 թ., 68 երես, գինն է 25 կոպէկ։

Այս գրքի մասին ստիպում է խօսել ոչ թէ արժանիքը, այլ այն հանգամանքը, որ լուսթիւնը կը խաբէ հեղինակին և նա, իրան շարունակ բանաստեղծ համարելով, իզուր և նոյն իսկ վնասակար աշխատանք կ'անի գրականութեան համար։ Մանաւանդ բանաստեղծի հռչակ ունենալու ցանկութեամբ հիւանդացած է մեր երիտասարդների մի նշանաւոր մասը, որոնք, չնչին բացառութեամբ, նոյնքան զուրկ են բանաստեղծական բնատուր շնորհից, որքան և պ. Մոշուեանը։

Սրանց սրտումը բանաստեղծական կրակի տեղ մի ճճի կայ, որ անհանգիստ է անում, ստիպում է մի գործ կատարել մի փառք

վաստակել. բայց որովհետև չեն կարողանում կամ չի լաջողւում այդ, գողանում են, մուրում են թեմաներ, մաքեր, ալլանդակում են, լանգեր են թխում և անճոռնի լուսահատ աղաղակներով բարձրանում Ոլիմպոսի գագաթը անելա՞ չը կորչելու և աւելի բարձր երևալու համար։ Սակայն նոքա չեն խաբել ընթերցող հասարակութեանը և հայոց Մուսալի համար ընդհանուր արհամարհանք են վաստակել, բանաստեղծի նշանակութիւնը ծիծաղելի են դարձրել. այն տեղն են հասցրել, որ «Բանաստեղծութիւններ» վերնագիրը կրող գիրքը շատ անգամ առանց կարդացելու է պախարակւում։

Այդ դժբախտ հերոսներից մէկն է պ. Մոճուռեանը։ Մեր վկան նորա գիրքն է։

Վերցնենք առաջին ոտանաւորը «Մուսալ», որ իբրև գոհար դրած է գրքի ճակատին. —

«Ոլիմպոսի սուրբ գագաթից Արամազդը զայրացաւ, երբ... մի հողեղէն տեսաւ Պերսեփոնին հրամայեց նրան Ցարտարոս տանել... Դիւցազները սարսափեցին, բայց Մուսայի ահեղ դէմքը չը սարսափեց (զոչազ դէմքո)։ Այն ժամանակ Արամազդը հարցրեց «Ասէք, Հերմէս, Ապոլլոն... գուցէ ձեր է սա (Մուսան) ժառանգ մի երկրային կնոջից։ Եւ Ապոլլոնը չոքեց, ներում աղաչեց։

«Ներում եմ, ասաց Արամազդ,
Բայց դու չտապիր ողջունել,
Ոլիմպոսի բարձունքից
Անմահ հոգով պատկել»։

Ապոլլոնը չը գիտեմ ինչպէս հասկացաւ այս հրամանը, միայն «խոստացաւ Մուսային իր քնար... երգեց տխուր հրաժեշտով (հրաժեշտը), պատուէրներ տուեց» և երկնածին (չէ՞ որ երկրային կնոջից էր ծնւել) վեհ Մուսան հեշտագին սլացաւ Ոլիմպոսի բարձունքից»։

Մուսալի աշխարհ գալու պատմութիւնն է երգի առարկան։ Բայց ինչու համար Արամազդը զայրացաւ և Ցարտարոս ուղարկեց հողեղէնին. խեղճը խօսք սահաւոր բարձունքը չը պղծեց։ Մրբէ Արամազդն արգելել հողեղէններին ներքև չրջել-երևալ։ Զէր կարելի ուրիշ բանով զայրացնել հայր Արամազդին (օրինակ մի ճանճ քթին նստէր, կամ մի օրինակ բանաստեղծութիւններ ստանար Աղէքսանդրապոլից) Մուսալի քաջութիւնը ցոյց տալու համար։ Բայց միթէ Մուսան իւր ահեղ դէմքի չը սարսափելու համար աքսորւած է Ոլիմպոսի գագաթից. և միթէ երկնաւիններից ամենի քաջասիրտ է երկրային կնոջ ծնունդը...

Վերցնենք երկրորդ ոտանաւորը «Իմ բեղետակին».

Բանաստեղծը իւր պարտիզի ծաղիկներից բաժանում է սիրուն լափրուկին (եթէ բեղետան լափրուկ է, էլ ինչու չը գրել լափրուկ) և զարդ ընտրում իւր սրտին անուշ (!)։ Ցափրուկը զրկւած իւր վիճակից «վարդափթիթ ծաղկի ստերով անուշ հոտ էլ չի տարածում» (?)։ երգիչը զղջում է, թէ ինչի (ինչու) քաղեց (վերևն էլ ասում է բաժանեցի-ուրիշին պոկել է) իւր քնքուշ ծաղկին և սպասում է (մենք էլ հետը) չորանալուն։ Բայց, կանկարծ, ով հրաշք, ծաղիկը սենեակի մի լուռ անկիւնում ուրախ,

անհոգ սրտով դարձեալ ծաղկում է և բուրում անցածը խայտառ մոռնալով»։ Եւ սրան բանաստեղծը անուանում է «անգութ բաղտին հնազանդւել»։ Սովորած ենք լսանելու պ. Մոճոռեանին, որ քաղած լափրուկը եթէ իւր անգութ բաղտին հնազանդւէր՝ պիտի չորանար, ոչ թէ չորանալուց յետոյ դարձեալ ծաղկէր և բուրէր...

Երրորդ ոտանաւորում պ. Մոճոռեանը պատմում է որ «լայն ու ազատ կամարում լուսոյ վերջին նշոյլով մի փոքրիկ վարդագոյն ամպ է տեսել սպիտակ թևերով, չար հողմերի ճանկերում դանդաղ լողալիս, որի սիրտը, սակայն, շտապում է...»։

Բնութիւնը շատ հրաշալի պատկերներ է ստեղծում, բայց բնութեանը ծանօթ մարդը լայն ու ազատ կամարում այսպիսի հրաշք չի լինել տեսած։ Ամպը վարդի գոյն է ընդունում արշալուսի կամ վերջալուսի շողերից. և բոլորովին կարմրում է կամ միայն եզերքն են կարմրում, բայց երբէք չի պատահել, որ ամպի մէջը կարմրէր, իսկ եզերքը սպիտակ մնային. այն էլ մի փոքրիկ ամպի։ Փոքրիկ ամպի «լուսոյ վերջին նշոյլը» և «շտապող սիրտն» էլ բնութեան դաղանիքներ են, որ Ողիմպոսի այս սիրելիին են միայն ըմբռնելի։

Այսպէս, կարգով կարելի էր գնալ մինչև այն ցանկալի, խորհրդաւոր բառը, որ կոչւում է «վերջ»։ բայց բանաստեղծը մեզ կանգնեցնում է իւր գերեզմանի վրայ։ Երես 39 («Գերեզմանիս վերայ, Նւէր օր. Հ. Մ.-ին»)։ Այստեղ իմանում ենք, որ բանաստեղծը մեռած է եղել (և այս երազ չէ), օրիորդը նրա վրայ վերջին անգամ մի բուռն սև հող է ձգել լալով, բայց նա իւր չորացած լափրուկի նման կրկին յարութիւն է առել։

Մի անգամ, երկնքում աստղեր չը տեսնելով, պ. Մոճոռեանը բացանչում է.

«Գոռող Աստուած մի ձեզ հանգցրեց
Նախանձելով ձեր ազատ փառքին,
Թէ՞ անողոք մի բռնակալ ձեզ վանեց
Դէպի մութ վայրեր, լայն Տարտարոսին...» (երես 18)։

Մի ուրիշ անգամ տեսնելով, որ մի աստղ թռաւ, նա հարցնում է.

«Ասէ՛ք, աստղեր... ազատ, չքնաղ փայլեր
Նրա լոյսը ժայթքեցին...»
(երես 51)։

Այս բոլորի համար պ. Մոճոռեանը մեզ պատասխանում է.

«Դատարկ է սիրտս և ամայացած...
Ա՛խ, Երբ ես տեսել մի չորցած ծաղկի
Բուրել ու բացուել գարնան ցողերով»։ (երես 44)։

Եւ այս խոստովանելով հանդերձ դարձեալ ստիպում է մեզ իւր դատարկ ու ամայի սրտում բանաստեղծի խանդ ու աւիւն որոնել, չորցած ծաղկից բուրմունք ընդունել....

Պր. Մոճոռեանը ոչ թէ զուրկ է թէկուզ փոքրիկ բանաստեղծի երևակայութիւնից ու շնորհքից, այլ և հասարակ յիշողութիւն անգամ չունի։ Նա առաջին տողում ասածը մոռանում է միւս տողում և այդպիսով յառաջանում են խայտառակ հակասութիւններ, որոնք այնքան շատ են և աչքի ընկնող, որ մարդ ամեն մի ոտանաւոր կարդալուց յետոյ ակամայից յիշում է մի ուրիշ այսպիսի

բանաստեղծի նշանաւոր դարձած տողերը.

«Կապոյտ երկնքում աստղեր են փայլում,
Կարկուտ ու կայծակ գլխիս են թափւում»:

Ինքնաստեղծ այլանդակ բառեր ու նախադասութիւններ որքան կամենաք.—մոլեգնալին վշտեր, անշուք սիրտ, չար ճակատագրի անողոք բաղդ, որոտ հրաման և այլն և այլն:

Ցանգերի ու վանկերի մեծ անհամաձայնութեան մասին էլ չենք խօսում:

Պր. Մոճոռեանը նմանութիւններ շատ ունի. (Վառել, Ամպ, Տուէք ինձ մի քաղցր քուն, Եթէ սիրտս ոչ մի տեղում, և այլն): Այս անյիշատակ նմանութիւններն էլ այնքան են յաջող, որ ինձ յիշեցնում են մի ուրիշ բան.—Մեր գիւղացի քարտաշին տուել էին ձիու պատկեր, որ նմանը փորագրի մի քաջ մարդու գերեզմանի վերայ. ուստէն փորագրել էր և ձիու տեղ դուրս էր եկել էշ:

Այստեղ արդէն ժամանակ է բարի խորհուրդ տալու պ. Մոճոռեանին, թողնել բանաստեղծութիւնը և իւր գործը ճանաչել. Թէ չէ, ոչ թէ հոգեղէնների անկայտ մեղքերի, այլ այդպիսի բաների համար միայն Ոլիմպոսի սուրբ գագաթից կը զայրանայ հայր Արամազդը, և գուցէ Տարտարոս էլ ուղարկի:

Ցովհաննէս Թումանեանց.

«ՋԱՒԱԽՔԻ ԲՈՒՐՄՈՒՆՔ»-Ի ԱՌԻԹՈՎ.

(Պատասխան «Ջաւախքի բուրմունք»-ի մասին «Մուրճ»-ի №№ 7—8 տպած գրախօսութեան).

Հասկանալով ազգագրական նիւթերի անհրաժեշտութիւնը ապագայ գիտնական ուսումնասիրութեան համար, ես ամբողջ մի տարի շրջել եմ Ախալքալաքի ամբողջ գաւառը և Գ. Խալաթեանի կազմած «Ծրագիր Հայ ազգագրութեան» առաջնորդութեամբ աչքերովս տեսած և ականջովս լսած բաները միայն նկարագրել, գրի եմ առել, և ապա դոցանից կազմել մի աշխատութիւն, որ կրում է «Ջաւախք» խորագիրը և որ 1600 երեսների մէջ պարունակում է հետևեալը.

Ա. հատոր. Ջաւախքի անցեալը հայոց և վրաց մատենագիրներից քաղուած. Ջաւախք և Ախալքալաք.—Խրթըզ, Տիմոտի կամ Թմուկի, Ծունդա, Գիմուրդօ, Վարձիա կամ Վարձունիք.

Ջաւախքի տեղագրութիւնը, սահմանները, Ախալքալաքի դաշտավայրը, լեռները, լճերը և գետերը, կլիման, բուսականութիւնը, հանքային ջրերը.